

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ» ԵՎ «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Դատավարական ձևն ապահովում է քրեական դատավարության խնդիրների առավել արդյունավետ կենսագործումը: Այդ արդյունավետության բարձրացման նպատակով ներկայումս առավել կենսունակ ու ժամանակի պահանջներին համահունչ է այն մոտեցումը, որ միասնական դատավարական ձևի հետ միասին ենթադրվում է նաև տարբերակված դատավարական ձևի գոյություն: Դրա դրսևորումների է դատական քննության արագացված կարգը, որի ներդրումը նորոյթ էր հայրենական քրեական դատավարությունում: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության համար ոչ ավանդական այս ինստիտուտը ներմուծվեց 2007 թվականին թիվ ՀՕ-93-Ն օրենքով, որով քրեական դատավարության օրենսգիրքը լրացվեց 9¹ բաժնով: Այս ինստիտուտի էությունն այն է, որ առաջադրված մեղադրանքի հետ ամբաստանյալի համաձայնության դեպքում դատարանն իրավասու է կայացնել մեղադրական դատավճիռ՝ առանց քրեական գործի ըստ էության քննություն կատարելու: Արագացված դատական քննության կարգ կիրառելու նպատակը ոչ մեծ, միջին ծանրության, ինչպես նաև ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով վարույթի պարզեցումն է՝ արդարադատության հնարավորինս արագ և արդյունավետ իրականացումը, դատարանների բեռնաթափումն ու ռեսուրսների խնայողությունն ապահովելու համար:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ քրեական արդարադատության ոլորտում գործի քննության պազեցմանը կամ արագացմանն ուղղված ընթացակարգերի նախատեսումը համընդհանուր միտում ունի: Այդ միտման արդիականությունն արդարադատության համակարգում իրավասու մարմինների գերբեռնվածության, գործերի քանակի շարունակական աճի արդյունք է և ուղղված է ինչպես ռեսուրսների խնայողականության ապահովմանը, այնպես էլ հանցավորության հակազդման առավել գործուն կառուցակարգերի ներդրմանը:

Հարկ է նշել, որ ուսումնասիրելով միջազգային փորձը՝ նկատում ենք, որ երկրների մեծ մասում արագացված դատական քննության կարգի փոխարեն կիրառվում է համաձայնեցման վարույթը, որը տարբերակված վարույթի հատուկ ձև է: Թեև դրա հիմքում ընկած գաղափարախոսությունը որոշակի ընդհանուր գծեր ունի արագացված դատական քննության կարգի հետ, սակայն տարբերվում են քրեաիրավական վեճի հաղթահարման կառուցակարգերը: Մասնավորապես, արագացված դատական քննության կարգը կիրառվում է որպես «ամբաստանյալ և դատարան» փոխհարաբերության վրա հիմնված կառուցակարգ, որտեղ դատարանը, անձի կողմից իր մեղքն ընդունելու պայմանով, նշանակում է առավել մեղմ պատիժ կամ ազատում պատիժը կրելուց: Մինչդեռ համաձայնեցման վարույթը, ինչպես և հուշում է վարույթի վերտառությունը, համաձայնեցման կառուցակարգ է՝ հիմնված «ամբաստանյալ և մեղադրանքի կողմ» փոխհարաբերության վրա, որտեղ

սահմանված մեխանիզմի կիրառմամբ, ամբաստանյալը հատուցման ենթակա վնասի և ակնկալվող պատժի չափի, դրա կրման նպատակահարմարության վերաբերյալ հարցերը բանակցում է համապատասխանաբար տուժողի և մեղադրողի հետ: Ի տարբերություն արագացված դատական քննության, համաձայնեցման վարույթը հիմնված է դիսպոզիտիվության սկզբունքի վրա, որտեղ կողմերն են որոշում վարույթի առանցքային նշանակություն ունեցող հարցերը, իսկ դատարանն ընդամենը կատարում է արբիտրի դեր՝ հետևելով օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմանը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հայրենական օրենսդրությունում որպես հատուկ վարույթի նորարարական տեսակ՝ հարկ է առանձնացնել համագործակցության վարույթը, որը հիմնված է առավել մեղմ պատիժ ստանալու կամ առհասարակ պատժից ազատվելու ակնկալիքով նոր հանցագործություն բացահայտելու համար դատախազի հետ համագործակցելու հայեցակարգի վրա: Նման պայմաններում, դատախազը գնահատելով համագործակցության նպատակահարմարությունը, դրա արդյունքում նոր հանցագործության բացահայտման հնարավորությունը, որոշում է համագործակցության համաձայնագիր կնքելու անհրաժեշտությունը: Այս վարույթը առաջարկվել և ներդրվել է աշխարհի մի շարք երկրներում և իր արդյունավետությունն է ապացուցել մի շարք դեպքերում: Հարկ է նշել, որ համագործակցության վարույթի ներդրման նպատակն առավելապես ուղղված է քրեական հետապնդում իրականացնող մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը՝ հատկապես կազմակերպված հանցավորության դեմ պայքարում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ.

ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Չեխիան ունի մեղքի և պատժի համաձայնագրի ինստիտուտ, որը ներառվել է Չեխիայի քրեական դատավարության օրենսգրքում 1995 թվականին: Այն կամընտիր որոշում է, որը կայացվում է դատախազի հայեցողությամբ և միայն սահմանված իրավական նախադրյալներն ու պայմանները կատարելուց հետո:

Չեխիայի քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի դրույթների (Section 175a, 176b) ուսումնասիրությունից հետևում է, որ մեղքի և պատժի համաձայնագրի ինստիտուտը համաձայնեցման ինստիտուտի մոդիֆիկացված տեսակ է, որը գործում է ոչ թե նախնական դատական լուծման ընթացքում, այլ դրանից առաջ, երբ դատախազը գտնում է, որ գործով ձեռք բերված ապացույցները հիմնավորում են մեղադրյալի մեղքը և ռեսուրսների խնայման նպատակով որոշում է սկսել մեղքի և պատժի շուրջ բանակցությունները: Համաձայնագրի բանակցություններին մասնակցում է նաև մեղադրյալի պաշտպանը և տուժողը, ով բանակցում է վնասի հատուցման շուրջ: Համաձայնագիրը կնքվում է կողմերի միջև, և դատարանը միայն որոշում է կայացնում դրա հաստատման վերաբերյալ: Համաձայնագիրը հաստատելու համար առանցքային են հետևյալ պայմանները.

1) Պահանջվում է մեղադրյալի կողմից դատարանի առջև հայտարարություն, որում նա խոստովանում է իր մեղքը այն հանցագործությունը կատարելու մեջ, որի համար նա հետապնդվում է:

2) Մեղադրյալը պետք է համաձայնության գա հանցագործության հետևանքով տուժողին պատճառված վնասի հատուցման, ինչպես նաև անհիմն հարստացման արդյունքում ստացվածի հատուցման շուրջ:

Հատկանշական է, որ համաձայնագրում պետք է սահմանվեն քրեական օրենսգրքին համապատասխան նշանակման ենթակա պաժատեսակը, պատժաչափը, ներառյալ փորձաշրջանի ժամկետը, քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև փոխարինվող պատիժը, պատժից ի վերջո հրաժարվելու հանգամանքը, և այն պարտականությունները, որոնք կարող են դրվել մեղադրյալի վրա:

Թեև Չեխիայի քրեական դատավարության օրենսգիրքը չի նշում համագործակցության վարույթի գոյության մասին, բայց այն նախատեսում է «համագործակցող անձ» հասկացությունը, որի ներքո հասկանում է հենց այն անձին, ով օգնել է բացահայտել հանցագործությունը և համագործակցել իրավասու մարմնի հետ: Մեղադրական եզրակացությունը դատարան ներկայացնելիս դատախազը համագործակցող անձի առկայության դեպքում նշում է կատարում նաև այդ մասին, դատարանին տեղեկացնում համագործակցության ծավալների և արդյունքների մասին:

Դատավարական օրենսգիրքը հստակ ամրագրում է, որ եթե համագործակցող անձը չի կատարել ավելի ծանր արարք, քան այն արարքն է, որի բացահայտմանը նա նպաստել է, կամ չի հանդիսացել ավելի ծանր հանցանքի կազմակերպիչ կամ դրդիչ, կամ դիտավորյալ արձագանքի առողջությանը չի պատճառել ծանր վնաս կամ մահ, և եթե չկան պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ, ապա դատախազը կարող է միջնորդել համագործակցող անձին ազատել պատժից:

Դատավարական օրենսգրքից բխում է, որ համագործակցող անձի դերը կարևորվում է կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հարցում:

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ գլխով կարգավորվում է համաձայնեցման վարույթը (դրույթների վերլուծությունից հետևում է, որ դրանում առկա են նաև համագործակցության վարույթի տարրեր): Օրենսգրքի 209-րդ հոդվածում նշվում է, որ համաձայնեցման վարույթով մեղադրյալն իրեն մեղավոր է ճանաչում, ինչպես նաև համաձայնվում է դատախազի հետ պատժաչափի, մեղադրանքի մեղմացման կամ մասնակի վերացման, վնասի փոխհատուցման հարցերի շուրջ: Մեղադրյալը գործարքի կնքման ժամանակ, այդ հոդվածի 1-ին կետով սահմանվածից բացի, կարող է համաձայնվել դատախազի հետ համագործակցության և (կամ) վնասի փոխհատուցման հետ: Օրենսգրքի 210-րդ հոդվածով սահմանվում է, որ համաձայնությունը պետք է կնքվի վերադաս դատախազի հետ գրավոր:

Համաձայնեցման վարույթ կիրառելու առաջարկ կարող է անել կասկածյալը կամ մեղադրյալը, ինչպես նաև դատախազը:

Համաձայնություն կնքելիս դատախազը պարտավոր է մեղադրյալին նախազգուշացնել հնարավոր հետևանքների մասին, ինչպես նաև այն մասին, որ համաձայնություն կնքելիս մեղադրյալը չի ազատվում քաղաքացիական կամ այլ պարտավորություններից: Բացառիկ դեպքերում Վրաստանի գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը կարող է միջնորդություն ներկայացնել դատարան՝ ամբաստանյալին քաղաքացիական պատասխանատվությունից լրիվ կամ մասնակի ազատելու պահանջով: Այդ դեպքում պետությունը պատասխանատվություն է կրում քաղաքացիական վնասի համար:

Ելնելով համաձայնեցման վարույթից՝ դատախազը կարող է պահանջել պատժաչափը նվազեցնել կամ մի քանի հանցագործությունների դեպքում որոշում

կայացնել մեղադրանքից մասամբ հրաժարվելու մասին: Երբ դատախազը պահանջում է պատիժը մեղմացնել կամ պատիժը վերացնել, անպայման պետք է հաշվի առնի պետության շահը, ինչպես նաև ելնի իրավական գերակայության սկզբունքից, պետք է գնահատվի կատարված հանցագործության, ինչպես նաև նշանակված պատժի ծանրությունը, հանցանքի բնույթը, մեղավորության աստիճանը, ամբաստանյալի հանրային վտանգավորությունը, անձնական հատկանիշները, նախաքննության մարմնի հետ համագործակցությունը և մեղադրյալի վարքը՝ հանցագործության արդյունքում պատճառված վնասի հատուցման մասով:

Հնարավոր չէ համաձայնեցման պայմանագիր կնքել առանց պաշտպանի անմիջական ներգրավման կամ առանց մեղադրյալի նախնական համաձայնության: Անթույլատրելի է այնպիսի պայմանագիր կնքել, որը սահմանափակում է մեղադրյալի իրավունքը՝ խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի դեպքում համապատասխան անձանց նկատմամբ քրեական հետապնդում սկսելու պահանջով:

Համաձայնեցման պայմանագրի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որն արտացոլում է մեղադրյալի և դատախազի միջև բանակցությունների գործընթացը: Համաձայնեցման պայմանագրի արձանագրության պատճենը հանձնվում է մեղադրյալին և նրա պաշտպանին: Մեղադրյալը և նրա պաշտպանը կարող են արտահայտել իրենց դիտողությունները: Դիտողությունները կցվում են գրառմանը: Պայմանագիրը ստորագրում են դատախազը, մեղադրյալը և նրա պաշտպանը, ինչպես նաև մեղադրյալի օրինական ներկայացուցիչը (եթե այդպիսիք կան):

Պայմանագրի կնքումից հետո դատախազը միջնորդում է դատարանին գործն առանց հիմնական լուսմաների անցկացնելու և դատավճիռ կայացնելու մասին: Դատարանն իրավասու է չհաստատել պայմանագիրը, եթե չեն պահպանվել դրա կնքման պայմանները:

ԲՈՍՆԻԱ ԵՎ ՀԵՐՑԵՂՈՎԻՆԱ

Բոսնիա և Հերցեգովինայի Բրչկոյի շրջանի քրեական դատավարության օրենսգրքի հոդված 231-ով կարգավորվում է համաձայնեցման վարույթը՝ սահմանելով, որ կասկածյալը կամ մեղադրյալը և պաշտպանը կարող են բանակցել դատախազի հետ հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի կողմից մեղավորությունն ընդունելու պայմանների վերաբերյալ:

Նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է առ այն, որ դատախազը կարող է մեղադրյալին կամ կասկածյալին առաջարկել օրենքով ազատազրկում պատժատեսակի համար սահմանված նվազագույն չափը կամ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ:

Մեղքի ընդունման մասին համաձայնությունը կազմվում է գրավոր, և մեղադրական եզրակացության հետ միասին հանձնվում է նախնական դատական լուսման անցկացնող դատավորին, հիմնական դատալուսման անցկացնող դատավորին կամ Կոլեգիա: Մեղադրական եզրակացությունը հաստատելուց հետո նախնական դատական լուսման անցկացնող դատավորը պետք է քննարկի համաձայնությունը և հրապարակի սանկցիան, քանի դեռ գործը չի ներկայացվել հիմնական դատալուսման անցկացնող դատավորին կամ Կոլեգիա՝ հիմնական դատաքննությունը նշանակելու համար: Գործը ներկայացնելուց հետո՝ հիմնական

դատավարությունն նշանակելու նպատակով դատավորը կամ կոլեգիան որոշում են կայացնում համաձայնության մասին:

Նախնական լսումներին դատավորը կամ կոլեգիան կարող են ընդունել կամ մերժել համաձայնությունը: Սահմանված են մի շարք հարցեր, որոնցում համաձայնությունն ընդունելուց առաջ դատավորը, ի թիվս այլնի, պետք է համոզվի.

- 1) համաձայնությունը կնքվել է կամավոր,
- 2) մեղադրյալը գիտակցում է համաձայնեցման բնույթը,
- 3) մեղադրյալը տեղեկացված է հնարավոր հետևանքների մասին,
- 4) տեղեկացված է դատական ծախսերի պարտավորությունների մասին,
- 5) առկա են մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող բավարար ապացույցներ,

6) մեղադրյալը հասկանում է, որ համաձայնությամբ նա հրաժարվում է դատաքննության իր իրավունքից և որ չի կարող բողոքարկել նշանակված քրեական պատժի դեմ,

7) պատիժը համապատասխանում է օրենքի պահանջներին:

Այսպիսով, եթե դատարանն ընդունում է համաձայնությունը, մեղադրյալի հայտարարությունը մուտքագրվում է արձանագրության մեջ, և դատարանը շարունակում է դատաքննությունը՝ պայմանագրով նախատեսված պատժի կայացման համար:

Եթե Դատարանը մերժում է մեղքի ընդունման մասին համաձայնագիրը, դատարանը մերժման մասին տեղեկացնում է դատավարության կողմերին և պաշտպանին: Միևնույն ժամանակ, որոշում է հիմնական դատաքննության օրը:

Համաձայնեցման մասին պայմանագիրը չի կարող օգտագործվել որպես ապացույց:

ՆԻԴԵՐԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Քրեադատավարական ընթացակարգերում վարույթների տարբերակման և պարզեցման տեսանկյունից առկա է համագործակցություն՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով:

Նիդերլանդների Թագավորության քրեական դատավարության օրենսգրքի 226g հոդվածի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վկան, ով ունի նաև կասկածյալի կարգավիճակ, կարող է համագործակցել դատախազի հետ: Դատախազը վկայի հետ համաձայնության գալու իր մտադրության մասին պարտավոր է տեղյակ պահել իրավասու դատավորին:

Դատախազը կարող է նման համաձայնության գալ վկայի հետ միայն այն պայմանով, որ նա պետք է վկայություն տա մեկ այլ գործով կասկածյալի վերաբերյալ, փոխարենը դատախազը պետք է խոստանա, որ կպահանջի պատժաչափի կրճատում համաձայն քրեական օրենսգրքի 44a հոդվածի:

Հատկանշական է, որ համագործակցություն կարող է լինել այնպիսի ծանր հանցագործություններ բացահայտելու նպատակով, որոնք, նախատեսված լինելով դատավարական օրենսգրքի 67(1) հոդվածում, կատարվել են կազմակերպված հանցավոր խմբի կողմից և համեմատած համագործակցող վկայի կատարած արարքի ավելի ծանր են և նախատեսում են առնվազն 8 տարի ժամկետով ազատազրկում:

226g հոդվածը հստակ նախատեսում է, որ խնդրո առարկա դեպքում համաձայնությունը կարող է բացառապես վերաբերել պատժաչափի կրճատմանը:

Հարկ է ընդգծել, որ համաձայնագրի օրինականությունը պետք է հաստատվի իրավասու դատավորի կողմից: Համաձայնագիրն անօրինական ճանաչելու դեպքում դատախազը կարող է բողոքարկել այն:

Նույն մեխանիզմը *mutatis mutandis* կիրառելի է նաև մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձի նկատմամբ:

Անդրադառնալով համաձայնության դեպքում պատժաչափի կրճատման կանոններին՝ քրեական օրենսգրքը նախատեսում է, որ դատարանը կարող է նշանակել նախատեսված պատժի կեսը կամ ազատագրկման ձևով նախատեսված պատժի մեկ երրորդ մասը փոխարինել հանրային աշխատանքներով կամ տուգանքով:

ՈՌԻՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի Դաշնությունում 2009 թվականին նախաձեռնվեց և դաշնային օրենքի տեսք ստացավ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ նախատեսելու մասին նախաձեռնությունը: Քրեական դատավարության օրենսգրքում նախատեսվեց «Մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև մինչդատական համաձայնագիր» կոչվող ինստիտուտը, որը հնարավորություն էր տալիս հանցանք կատարած անձանց՝ մեղմացնելու իրենց պատիժը հանցակիցների դեմ ցուցմունք տալով: ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 61-րդ կետի համաձայն՝ համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրը պաշտպանության և մեղադրանքի կողմերի միջև գործարք է, որտեղ այդ կողմերը համաձայնության են գալիս կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվության վերաբերյալ՝ կախված քրեական գործի հարուցումից կամ մեղադրանք առաջադրելուց հետո նրա գործողություններից:

ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 317.1-րդ հոդվածի համաձայն՝ մինչդատական համագործակցության պայմանավորվածություն կնքելու մասին միջնորդությունը գրավոր ներկայացվում է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից՝ ուղղված դատախազին: Միջնորդագիրը ստորագրվում է նաև պաշտպանի կողմից:

Հատկանշական է, որ **ՌԴ քրեական դատավարության օրենսգրքով հստակ չի մատնանշվում, թե որ տեսակի հանցագործությունների դեպքում կարող է կիրառվել այս ինստիտուտը:**

Կասկածյալը կամ մեղադրյալն իրավասու է մինչդատական համագործակցության պայմանավորվածության միջնորդություն ներկայացնել՝ **քրեական հետապնդումը սկսելու պահից մինչև նախաքննությունը դադարեցնելու մասին հայտարարությունը:** Իր միջնորդագրում կասկածյալը կամ մեղադրյալը պետք է նշի, թե ինչ գործողություններ է պատրաստվում կատարել հանցագործության, հանցակիցների բացահայտման և քրեական հետապնդման հարցում քննությանը օգնելու համար:

Մինչդատական համագործակցության պայմանավորվածության միջնորդագիրը ներկայացնում է կասկածյալը կամ մեղադրյալը կամ նրա պաշտպանը՝ քննիչի միջոցով: Ստանալով նշված միջնորդագիրը՝ քննիչը երեք օրվա ընթացքում այն ուղարկում դատախազին՝ որոշելու միջնորդագրի հետագա ընթացքը:

Քննության արդյունքների համաձայն՝ դատախազը պետք է ընդունի հետևյալ որոշումներից մեկը.

1) մինչդատական համագործակցության պայմանավորվածության միջնորդագիրը բավարարելու մասին.

2) մինչդատական համագործակցության պայմանավորվածության միջնորդագիրը բավարարելը մերժելու մասին:

Մինչդատական համագործակցության պայմանավորվածության միջնորդագրի բավարարումը մերժելու մասին որոշումը քննիչի, կասկածյալի/մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

Կայացնելով մինչդատական համագործակցության պայմանավորվածության միջնորդագիրը բավարարելու մասին որոշում՝ դատախազը հրավիրում է քննիչին, կասկածյալին կամ մեղադրյալին և նրա պաշտպաններին: Նրանց մասնակցությամբ դատախազը մինչդատական համագործակցության պայմանավորվածություն է կազմում:

Հարկ է նշել, որ այն մեղադրյալի նկատմամբ, որի հետ կնքվել է մինչդատական համագործակցության պայմանավորվածություն, քրեական գործով դատական նիստերի վարման և դատարանի կողմից դատավճիռ կայացնելու հատուկ ընթացակարգը կիրառվում է, եթե դատարանը գտել է, որ.

1) դատախազը հաստատել է մեղադրյալի ակտիվ օժանդակությունը հանցագործության և այլ հանցակիցների բացահայտման, ինչպես նաև հանցագործության միջոցով ստացված գույքի որոնման գործում.

2) մինչդատական համագործակցության պայմանավորվածությունը կնքվել է կամավոր, ինչպես նաև առկա է պաշտպանի մասնակցությունը:

Քանի դեռ չի հաստատվել, որ պահպանվել են վերը նշված պայմանները, դատարանը որոշում է կայացնում ընդհանուր կարգով դատական նիստ նշանակելու մասին:

Նշված դրույթները կիրառելի չեն, եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից քննությանը օժանդակելը պարզապես հանցավոր գործողություններին իր մասնակցության մասին տեղեկատվության տրամադրումն էր:

Պարզելով, որ ամբաստանյալը պահպանել է բոլոր պայմանները և կատարել է իր հետ կնքված մինչդատական համագործակցության պայմանագրով սահմանված բոլոր պարտավորությունները, դատարանը կայացնում է դատավճիռ և ամբաստանյալի նկատմամբ նշանակում է պատիժ՝ հաշվի առնելով Ռուսաստանի Դաշնության Քրեական օրենսգրքի պահանջները:

Դատավճիռը հրապարակելուց հետո դատավորը կողմերին բացատրում է դատավճռի բողոքարկման իրավունքը և կարգը:

Եթե ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելուց հետո պարզվի, որ նա դիտավորյալ կեղծ տեղեկություններ է տրամադրել կամ դիտավորյալ թաքցրել է հետաքննությունից նշանակալից տեղեկություններ, պատիժը ենթակա է վերանայման ՌԴ քրեական դատավարությամբ սահմանված ընթացակարգով:

ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Սերբիայի քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածում նշվում է, որ մեղադրյալի կամ կասկածյալի և դատախազի միջև համաձայնեցման պայմանագիր կարող է կնքվել հետաքննություն սկսելու որոշում կայացնելու պահից մինչև ամբաստանյալի կողմից իրեն առաջադրված մեղադրանքի վերաբերյալ կարծիք հայտնելը: Համաձայնեցման պայմանագրի կնքման ընթացքում ամբաստանյալը պետք է ունենա պաշտպան:

Սերբիայի քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համաձայնագիրը պարունակում է հետևյալ հանգամանքները.

1) քրեական հանցագործության նկարագրությունը, որը հանդիսանում է մեղադրանքի առարկա.

2) ամբաստանյալի խոստովանությունը, որ նա կատարել է նշված հանցագործությունը.

3) համաձայնության արդյունքում պատժի տեսակը, չափը.

4) քրեական գործի վարույթի ծախսերի, հանցագործությունից նյութական օգուտների բռնագանձման և փոխհատուցման հայցի մասին համաձայնագիր, եթե այն ներկայացվել է.

5) հայտարարություն կողմերի և պաշտպանի կողմից այն որոշումը բողոքարկելու իրավունքից հրաժարվելու մասին, որով դատարանն ամբողջությամբ ընդունել է համաձայնագիրը, բացառությամբ նշված օրենսգրքով նշված դեպքի.

6) կողմերի և պաշտպանների ստորագրությունները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ի լրումն նշված տվյալների՝ համաձայնեցման պայմանագիրը կարող է նաև պարունակել.

1) հայտարարություն հանրային դատախազի կողմից՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին.

2) ամբաստանյալի հայտարարությունը պարտավորությունն ընդունելու մասին՝ պայմանով, որ ստանձնած պարտավորության բնույթը հնարավոր է դարձնում դրա կատարումը սկսելը՝ նախքան համաձայնագիրը դատարան ներկայացնելը.

3) հանցագործությունից ստացված հասույթի վերաբերյալ համաձայնություն, որը բռնագանձվելու է ամբաստանյալից:

Մեղադրական համաձայնության մասին որոշումը կայացվում է դատական նիստում, որին հրավիրվում են դատախազը, ամբաստանյալը և նրա պաշտպանները:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Արդարադատության հետ գործարք կոչվող ինստիտուտը նաև լայն տարածում ունի Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այս ինստիտուտը ամրագրված է նահանգային օրենսդրությունների մակարդակով, այն այլ կերպ կոչվում է «մեղքի ընդունման գործարք»: ԱՄՆ-ում մեղքի ընդունման գործարքով է իրականացվում գործերի մոտ 90 %-ը: Դրա էությունն այն է, որ մեղքի ընդունման գործում դատախազը ներկայացված մեղադրանքից հանում է մեղսագրվող հանցանքների մի մասը կամ առավել խիստ պատժվող հանցանքը վերադարձնում է առավել մեղմով: Գործարքը նաև զգալիորեն նվազեցնում է գործի քննության տևողությունը. այն իրականացվում է երկու փուլով, եթե մեղադրյալը մեղքն ընդունել է, ապա ներկայացվում է մեղադրական եզրակացությունը, և կայացվում դատավճիռ: Այս համակարգի հիմքում ընկած է այն մոտեցումը, որ քրեական դատավարությունը վեճ է ներկայացնում հանցանքի կատարման փաստի և դրանում անձի մեղավորության կապակցությամբ, և եթե այդ կողմերից մեկը (մեղադրյալը) իրեն մեղավոր է ճանաչում, ապա նման վեճը շարունակելն ինքնին անիմաստ է:

«Համագործակցության համաձայնագրերի վարույթն» օգտագործվում է կազմակերպված հանցավորության տարբեր դրսևորումների, ահաբեկչության, մասնավորապես՝ բարդ, բազմադրվագ, տևական բնույթ կրող կոռուպցիոն հանցագործությունների, թմրամիջոցների և զենքի ապօրինի շրջանառության, մարդկանց առևտրի և նմանատիպ այլ հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև՝ առանձնապես ծանր և բարդ քննություն ենթադրող այլ արարքների

վերաբերյալ գործերով: ԱՄՆ-ում այս ինստիտուտի կիրառումն այնքան արմատացած է, որ երբեմն այն կոչում են հանցավորության դեմ պայքարի ancient (հնագույն, древний) եղանակ: Մասնավորապես, Նյու Յորքի դաշնային արդարադատության համակարգում, քաղաքի Հարավային և Արևելյան դատական շրջանների վիճակագրության համաձայն, դաշնային համակարգով անցնող մեղադրյալների մեկ երրորդը կա՛մ արդեն կնքել են համագործակցության համաձայնագիր, կա՛մ էլ ձգտում են դրան:

Մեղադրյալի և նրա պաշտպանի միջնորդության բովանդակությունը/խմբագրությունը հսկող դատախազի համար ընդունելի լինելու դեպքում՝ դատախազը կնքում է համաձայնագիրը: Այս գործիքակազմը ենթադրում է նաև դատախազի ավելի մեծ ներգրավվածություն նախաքննության ընթացքում, մասնավորապես՝ նրա կողմից բանակցությունների վարում քննիչի միջոցով (հաշվի առնելով քննիչի և հսկող դատախազի գործառույթների տարանջատման ընդհանուր կարգավորումները), ինչն էլ պարտադիր է դարձնում քննիչի և դատախազի ամենօրյա սերտ աշխատանքն այս ուղղությամբ:

Հնարավոր է, որ համագործակցող անձը տրամադրի բացահայտող տեղեկություն, տա համապատասխան ցուցմունք նախաքննության ընթացքում, սակայն դատարանում, չնայած այդ ցուցմունքը պնդելուն, նշի, թե «այնքան էլ համոզված չեմ», «լավ չեմ հիշում», որ «այնքան ժամանակ է անցել, որ», այսինքն՝ չհրաժարվի իր ցուցմունքներից, սակայն իր վարքագծով կասկածի տակ դնի իր իսկ նախաքննական և դատական ցուցմունքների արժանահավատությունը: Սա կանխելու համար ԱՄՆ-ում օգտագործվում է *nolo contendere* («Չեմ վիճարկում») եզրույթը, որի էությունը, մասնավորապես՝ քրեական դատավարության դաշնային կանոնների՝ մեղքի ընդունման գործարքը կարգավորող 11-րդ կանոնի համաձայն՝ այն է, որ **մեղադրյալը պարտավորվում է, որ բացի այն, որ չի բողոքարկելու դատավճիռը, նաև որևէ կերպ իր վարքագծով կասկածի տակ չի դնելու դրա հիմնավորվածությունը:** Հակառակ դեպքում գործարքը չեղյալ է համարվում, և, որպես կանոն, այդ դեպքում մեղադրյալին սպառնում է ընդհանուր կարգով սովորաբար նշանակվողից ավելի ծանր պատիժ:

Սակցիաների մասով հարկ է նշել, որ ԱՄՆ-ում, օրինակ՝ զինված ավազակության համար 15 տարի ստանալուն ձգտող անձը չափազանց հետաքրքրված է այդ հեռանկարով, հետևաբար ավելի է ձգտում համագործակցության, քանի որ այլ տարբերակը 40 տարվա կամ ցմահ ազատազրկումն է:

ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ակնհայտ հանցագործությունների համար քրեական գործերը արագացնելու միտումն Իսպանիայում ի հայտ է եկել 19-րդ դարում: 1882 թվականին Իսպանիայի քրեական գործընթացում մտցվեց «conformidad» կարգը, որը նախատեսում է դատախազության մեղադրանքի և առաջարկվող պատժի հետ համաձայնության դեպքում պատժի կայացում առանց ապացույցների հետազոտման: Այս ձևը դեռևս շարունակվում է օգտագործվել Իսպանիայում:

1988 թվականից ի վեր Իսպանիայի քրեական դատավարության օրենսդրությունը թույլ է տվել մեղադրվողներին հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար պատիժը չի գերազանցում 6 տարվա ազատազրկումը, համաձայնվել դատախազի մեղադրանքին և առաջարկվող միջոցին: Եթե այդպիսի

համաձայնություն կա, դատարանը կայացնում մեղադրական դատավճիռ և նշանակում է կողմերի համաձայնեցված պատիժը:

ԻՏԱԽԱ

Պարզեցված ընթացակարգի կիրառման հնարավորությունը սահմանափակվում է միայն այն հանցագործություններով, որոնց համար պատիժը չի գերազանցում 5 տարվա ազատազրկումը: Օրենքը հնարավորություն է տալիս ամբաստանյալին դատապարտել հինգ տարվա ազատազրկման՝ պատիժը մեկ երրորդով կրճատելուց հետո (Իտալիայի քրեական դատավարության օրենսգրքի 444-րդ հոդվածի 1-ին մաս):

Օրենսդրության այս փոփոխությունը թույլ է տալիս կիրառել «patteggiamento» (հաշտարարագիր)՝ էականորեն ավելի երկար պատիժ ունեցող հանցագործությունների դեպքում:

Դատավորը գործի նյութերին ծանոթանալուց հետո կարող է արդարացնել ամբաստանյալին նախքան համաձայնագրի հաստատումը (հոդված 444.2): Եթե դատախազը համաձայն չէ ամբաստանյալի հետ գործարքի կայացմանը, ապա ամբաստանյալը գործի քննությունից հետո կարող է միջնորդել դատավորին ուսումնասիրելու այդպիսի համաձայնությունը մերժելու հիմք հանդիսացող պատճառները և **դատավորին խնդրելու պատժաչափը կրճատել մեկ երրորդով** (հոդված 448.1): Այսպիսով, առկա են հետապնդման և պաշտպանության ակտիվ կողմեր (ուղղակիորեն են վարում բանակցային գործընթացը), ինչպես նաև համեմատաբար պասիվ դերում գտնվող դատավոր:

ԱՆԳԼԻԱ

Անգլիայում համաձայնեցումը և համագործակցությունը շատ գիտնականներ համարում են Plea bargaining-ի դրսևորում, սակայն ըստ էության այն Անգլիայում համապատասխանում է համաձայնեցմանը, որի շրջանակներում իրականացվում է մեղքի ընդունում: Plea bargaining-ը մեղքի ընդունման մասին գործարքի անվանումն է, որը կնքվում է մեղադրող կողմի և պաշպանական կողմի կամ դատավորի և պաշտպանական կողմի միջև մեղքի ընդունման դիմաց բարենպաստ պայմաններ ստանալու համար: Մեղքի ընդունման մասին գործարքը կարող է դրսևորվել մի քանի ձևերով.

Առաջին՝ մեղադրանքի շուրջ գործարք մեղադրող կողմի հետ, որն իրականացվում է մինչև դատական կարգով մեղադրելը և որտեղ դատավորը չի ներգրավվում: Այստեղ մեղադրվող կողմը համաձայնվում է ընդունել իր մեղքը, սակայն իր կողմից կատարված հանցագործություններից մի քանիսում կամ իր կատարած հանցանքի փոխարեն այլ հանցանքում, որի համար նախատեսված է ավելի մեղմ պատիժ, օրինակ՝ սպանության փոխարեն ընդունում է անզգուշությամբ մահ պատճառելը:

Երկրորդ՝ փաստի շուրջ իրականացվող գործարք, որը տեղի է ունենում մեղադրող կողմի և ենթադրյալ հանցանք կատարած անձի միջև, այն բանի շուրջ, թե վերջինիս կողմից մեղքը ընդունելու դիմաց, ինչպիսի փաստեր պետք է ընտրեն կողմերը և ներկայացնեն դատարան, օրինակ՝ թմրադեղերի հետ կապված հանցագործության դեպքում հնարավոր է իրավիճակ, երբ հայտնի է (սակայն ապացույցներ առկա չեն), որ ենթադրյալ հանցանք կատարած անձը տիրապետել է մեծ քանակությամբ թմրանյութի, և մեղադրող կողմը առաջարկում է դատարան ներկայացնել փոքր քանակության մասին հավաստող ապացույց՝ ենթադրյալ հանցանք կատարած անձի մեղքի ընդունման դեպքում:

Համաձայնեցման դեպքում բարենպաստ պայմաններն արտահայտվում են պատժի մեղմացմամբ, որը կարող է արտահայտվել տարբեր կերպ. կարող է նշանակվել տուգանք ազատագրկման փոխարեն կամ կարող է նշանակվել նույն տեսակի ավելի մեղմ պատիժ, օրինակ՝ ավելի քիչ ժամկետով ազատագրկում: Դատավորների համար նաև նախատեսված են դատավճռով նախատեսվող պատժի որոշման համար որոշակի կանոններ, ըստ որի՝ պատիժը կարող է կրճատվել.

ա) առավելագույնը մեկ երրորդով, եթե մեղքը ընդունվել է հենց առաջին հնարավորության դեպքում,

բ) առավելագույնը մեկ քառորդով, եթե արդեն նշանակվել է դատաքննության օրը,

Ինչ վերաբերում է համագործակցությանը, ապա համապատասխան դեպքում. առաջին՝ անձին առաջարկվում է իր վկայության օգտագործման սահմանափակում, որը դրսևորվում է նրանում, որ իր դեմ իր վկայությունը չի կարող կիրառվել, երկրորդ՝ անձն անձեռնմխելիություն է ստանում մեղադրանքից, և նա չի կարող մեղադրվել համապատասխան հանցանքի համար իր օժանդակության դիմաց, երրորդ՝ եթե անձը, ընդունելով իր մեղքը, համագործակցում է, ապա այս դեպքում դատավորը համապատասխան դեպքում պատիժ նշանակելիս պետք է հաշվի առնի օժանդակության աստիճանը և բնույթը: Դատավորը դատավճռում պետք է նշի նաև այն պատժի չափը, որը կնշանակվեր, եթե համագործակցություն չլիներ: Անհրաժեշտ է նաև նշել, որ համագործակցության դեպքում մեղադրվողը պետք է ակնկալի պատժի էական մեղմացում, ինչը կարող է դրսևորվել տարբեր ձևերով. պատժի կեսից մինչև երկու երրորդի կրճատում:

Առաջարկվող կարգավորման բնույթը.

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմքում ունենալով քրեական դատավարության օրենսգրքում արագացված դատական քննության կարգի վերաիմաստավորման գաղափարախոսությունը, ինչպես նաև դատավարական ձևի պարզեցման անհրաժեշտությունը՝ մշակվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ նաև Փաթեթ):

Փաթեթով առաջարկվում է ներդնել համաձայնեցման վարույթ, որը կարող է կիրառվել՝

- ոչ մեծ, միջին ծանրության կամ ծանր հանցագործություններով,

- եթե ամբաստանյալը համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդություն է ներկայացրել քրեական գործը դատարան ուղարկելու պահից մինչև դատաքննությունն սկսվելը:

Միաժամանակ, կարևոր է, որ եթե մեղադրական եզրակացությունը հաստատելիս մեղադրողն առարկել է համաձայնեցման վարույթի կիրառման դեմ, մինչ դատաքննությունն սկսելը կարող է փոխել համաձայնեցման վարույթի վերաբերյալ մեղադրական եզրակացությունը հաստատելիս իր հայտնած դիրքորոշումը:

Փաթեթով սահմանվել են նաև համաձայնեցման վարույթի կիրառումը բացառող հանգամանքները, մասնավորապես՝ համաձայնեցման վարույթ չի կարող կիրառվել, եթե՝

1) ամբաստանյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայն չէ,

2) ամբաստանյալը չունի պաշտպան կամ միջնորդությունը ներկայացրել է առանց պաշտպանի հետ խորհրդակցելու:

3) ամբաստանյալը չի գիտակցում միջնորդության բնույթը կամ դրա հետևանքները:

4) առերևույթ հիմնավորվում է, որ միջնորդությունը ներկայացվել է ոչ կանավոր, այդ թվում՝ խոշտանգման կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ այլ բռնության կամ սպառնալիքի կամ ոչ իրավաչափ խոստման ազդեցությամբ:

5) վարույթում ներգրավված մի քանի ամբաստանյալներից առնվազն մեկն առարկում է համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ:

6) համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ փաստարկված առարկում է մեղադրողը:

7) առերևույթ հիմնավորվում է, որ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ և համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ առարկում է տուժողը:

Ինչպես երևում է համաձայնեցման վարույթի կիրառումը բացառող վերոնշյալ վերջին հանգամանքից, տուժողը կարող է առարկել համաձայնեցման վարույթի կիրառմանը միայն, եթե հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ ի տարբերություն գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված արագացված դատական քննության կարգի, սույն վարույթի շրջանակներում վերափնաստավորվել է տուժողի մասնակցության գաղափարախոսությունը, նախատեսվել իրեն պատճառված վնասի հատուցումն ապահովելու կառուցակարգ: Մասնավորապես, համաձայնեցման վարույթի շրջանակներում տուժողը մասնակցում է իրեն հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման բնույթի և չափի վերաբերյալ բանակցություններին: Ընդ որում, հստակ ամրագրված է, որ բանակցությունների արդյունքում կողմերը պետք է համաձայնության գան հատուցման ենթակա վնասի բնույթի և չափի շուրջ: Ամբաստանյալը կա՛մ բանակցությունների ընթացքում պետք է հատուցի տուժողին պատճառված վնասը, կա՛մ բանակցությունների արդյունքում կազմվող համաձայնության մասին արձանագրության մեջ, տուժողի հետ համաձայնեցնելուց հետո, հստակ նշի հատուցման ենթակա վնասի բնույթը և չափը՝ ըստ նպատակահարմարության սահմանելով նաև վնասը հատուցելու ժամանակացույցը:

Հարկ է նաև նկատել, որ համաձայնեցման վարույթի շրջանակներում պարտադիր է, որ կողմերը համաձայնության գան հատուցման ենթակա վնասի բնույթի և չափի, ամբաստանյալի նկատմամբ կիրառման ենթակա պատժի (պատժատեսակի և պատժաչափի) ներառյալ այն կրելու նպատակահարմարության հարցի շուրջ: Հակառակ պարագայում, դատարանը գործի քննությունը պետք է շարունակի ընդհանուր կարգով: Ինչ վերաբերում է բռնագանձման ենթակա գույքի և դրա չափի շուրջ հարցերին, ապա դրա շուրջ համաձայնության ձեռքբերումը պարտադիր չէ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ կազմված համաձայնության մասին արձանագրությունը, այդ թվում՝ հաշվարկվող պատժի չափի և դրա կրման նպատակահարմարության հարցերի առումով, պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին: Հակառակ պարագայում, դատարանն այն վերադարձնում է կողմերին՝ սահմանելով թերությունները վերացնելու մինչև տասնհինգօրյա ժամկետ: Եթե դրանք չեն շտկվում, կամ կրկին ներկայացվելու դեպքում թույլ են տրվում նոր թերություններ, ապա դատարանն իր որոշմամբ չի

ընդունում համաձայնության մասին արձանագրությունը և ընդհանուր կարգով շարունակում է գործի քննությունը:

Միաժամանակ, որպես համաձայնության մասին արձանագրությունը չընդունելու և ընդհանուր կարգով գործի քննությունը շարունակելու հիմքեր՝ նախատեսվել են հետևյալ հանգամանքները, եթե դատարանը գտնի, որ՝

1) ամբաստանյալին մեղսագրվող արարքն ակնհայտորեն կատարվել է ամբաստանյալ չհանդիսացող այլ անձի կողմից,

2) ամբաստանյալին մեղսագրված արարքին տրված իրավական գնահատականն ակնհայտորեն չի համապատասխանում մեղադրանքի փաստական հանգամանքներին:

Անհրաժեշտ է նշել, որ դատարանի կողմից կատարվող այդպիսի եզրահանգումները չպետք է լինեն գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա: Ընդ որում, հենց այդ հիմքերի ակնհայտության չափանիշի պայմաններում է, որ դատարանի կողմից համաձայնեցման վարույթի մերժումն ու ընդհանուր կարգով գործի քննության շարունակումը չի կարող դիտարկվել որպես դատարանի կողմնակալ վերաբերմունքի դրսևորում գործի նկատմամբ:

Համաձայնեցման վարույթով անհրաժեշտ պայմանների և հիմքերի առկայությունը հաստատելու, դատաքննության հատուկ կարգը կիրառելու արդյունքում, ըստ ներկայացված Փաթեթի, դատարանը կարող է կայացնել միայն մեղադրական դատավճիռ՝ հաշվի առնելով նախատեսված առանձնահատկությունները: Ընդ որում, մեղադրական դատավճիռը պետք է պարունակի համաձայնության մասին արձանագրության տեքստի բառացի շարադրանքը: Դատարանն այդ հարցերը պետք է լուծի ըստ համաձայնության մասին արձանագրության, այսինքն՝ այնպես, ինչպես կողմերը եկել են այդ հարցերի շուրջ համաձայնության: Նշվածը պայմանավորված է համաձայնության վարույթի հիմքում դրված գաղափարախոսությամբ, դատարանն իրավասու չէ միջամտելու համաձայնեցման ընթացակարգին, բացառությամբ այն դեպքերի, երբ լուծման ենթակա հարցերը ենթակա չեն համաձայնեցման և չեն կարող դառնալ բանակցությունների առարկա (օրինակ՝ ակրոհոլամոլությունից բուժման կարիք ունեցող անձի նկատմամբ պատժի հետ մեկտեղ հոգեբույժի մոտ հարկադիր արտահիվանդանոցային հսկողության և հարկադիր բուժման նշանակումը կամ շրջանառությունն արգելված, անձանց ու հասարակության համար վտանգ ներկայացնող գույքի բռնագանձումը): Հենց այդ նույն տրամաբանության շրջանակներում է նաև այն, որ քաղաքացիական հայց ներկայացվելու դեպքում, այն թողնվում է առանց քննության: Այսինքն՝ դատարանը, ի դեմս պետության, չի միջամտում տուժողի կողմից ինքնուրույն և իր ռիսկով իրականացվող բանակցային գործընթացի արդյունքում ձեռքբերված համաձայնեցման իրագործմանը, և ընդամենը կատարում է արբիտրի դեր՝ հետևելով օրենքով սահմանված պահանջների պահպանմանը:

Նշված առանձնահատկությունների պայմաններում էլ նախատեսվել է, որ համաձայնեցման վարույթով կայացված դատավճիռը չի կարող բողոքարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին (գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի

հետևությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին) և 4-րդ (դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին) կետերով նախատեսված հիմքերով:

Միաժամանակ, Փաթեթով առաջարկվում է ներդնել նաև համագործակցության վարույթ, որն ի տարբերություն համաձայնեցման վարույթի, կարող է նախաձեռնվել մինչդատական վարույթում: Այն կարող է կիրառվել`

- ցանկացած ծանրության հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի վարույթով,
- ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտումն ապահովելու նպատակով,
- եթե բացահայտվող հանցագործությունը վերաբերում է իրեն վերագրվող հանցագործության ծանրությանը համարժեք կամ առավել ծանր հանցագործությանը,
- եթե բացահայտվող հանցագործությունն առնչվում է մեղադրվող անձին առաջադրված մեղադրանքին և առերևույթ կատարվել է այլ անձի կողմից:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ վերոնշյալ պահանջներից բացառություններ են նախատեսված քրեական ենթամշակույթին առնչվող կամ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումն ապահովելու նպատակով համագործակցության վարույթ նախաձեռնելու ընթացակարգին: Այդ դեպքում համագործակցության վարույթի կիրառման պայմաններն առավել պարզեցված են` նկատի ունենալով, որ այդ հանցագործությունների բացահայտման անհրաժեշտությունը պետության գերակա ուղղություններից է: Այդ պատճառով, Փաթեթով առաջարկվում է, որ անձը կարող է համագործակցել ցանկացած ծանրության աստիճան ունեցող` քրեական ենթամշակույթին առնչվող կամ կոռուպցիոն հանցագործության բացահայտումն ապահովելու նպատակով: Միաժամանակ, այդպիսի հանցագործությունն ինչպես կարող է առնչվել, այնպես էլ կարող է չառնչվել մեղադրվող անձին առաջադրված մեղադրանքին, և կարող է կատարված լինել ինչպես իր, այնպես էլ այլ անձի կողմից: Սակայն, բոլոր դեպքերում, բացահայտվող հանցագործությունը պետք է վերաբերի իրեն վերագրվող հանցագործության ծանրությանը համարժեք կամ առավել ծանր` քրեական ենթամշակույթին առնչվող կամ կոռուպցիոն հանցագործությանը:

Համագործակցության միջնորդությունը բավարարելու դեպքում հսկող դատախազը մեղադրյալի և նրա պաշտպանի մասնակցությամբ կազմում է համագործակցության համաձայնագիր, որում հնարավորինս մանրամասն շարադրվում է համագործակցության առարկան: Ընդ որում, ինչպես համաձայնեցման վարույթում, այս դեպքում ևս կողմերը կարող են նաև համաձայնության գալ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածով բռնազանձման ենթակա գույքի և դրա չափի վերաբերյալ: Սակայն հարկ է ընդգծել, որ նշվածը համագործակցության պարտադիր տարր չէ և կողմերը կարող են համագործակցել նաև առանց այդ հարցի շուրջ համաձայնության գալու:

Ըստ առաջարկվող կարգավորման` համագործակցության նպատակին հասնելու համար մեղադրյալի կողմից կատարվող գործողությունները կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում հանցակիցների բացահայտման, բռնազանձման ենթակա գույքի պատկանելիության, գտնվելու վայրի կամ դրա հնարավոր փոխակերպման վերաբերյալ տեղեկությունների տրամադրմամբ:

Ընդ որում, հարկ է նշել, որ ի տարբերություն համաձայնեցման վարույթի, որտեղ կողմերը կարող են նաև կնքել արձանագրություն՝ հետագայում պատճառված վնասը հատուցելու պայմանով, համագործակցության վարույթում մեղադրյալը պարտականություն ունի իր գործողությունների կատարման արդյունքում պատճառված վնասը հատուկ վարույթի շրջանակներում հատուցել լրիվ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, նախատեսվում է, որ համագործակցության վարույթով իրականացվող նախաքննության ընթացքում համագործակցության համաձայնագիրը կողմերի համաձայնությամբ կարող է փոփոխվել կամ լրացվել՝ օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ:

Համագործակցության վարույթ նախաձեռնելու և մինչդաստական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր կնքելու դեպքում մեղադրյալին մեղսագրված հանցագործությամբ քրեական գործի վարույթը, ելնելով բացահայտվող գործի քննության շահերից, կարող է կասեցվել: Փաթեթով նախատեսվում է, որ կասեցված գործով վարույթը վերսկսվում է համագործակցությունը դադարեցվելուց կամ մեղադրյալի կողմից մինչդաստական համագործակցության վերաբերյալ համաձայնագրով ստանձնած պարտականությունների պատշաճ կատարումը հաստատող փաստական տվյալներ ձեռք բերելուց հետո: Մեղադրյալի գործի վարույթի կասեցման ընթացակարգը նպատակ է հետապնդում ապահովելու համագործակցության նպատակի պատշաճ իրականացումը, այն է՝ նոր հանցագործության բացահատումը, որի պայմաններում միայն կարող է գնահատվել մեղադրյալի կողմից իր պարտականությունների կատարման պատշաճությունը՝ հնարավորություն ընձեռելով օգտվել օրենքով սահմանված արտոնություններից:

Փաթեթով նախատեսվում է, որ եթե մեղադրյալի համագործակցության արդյունքում դատախազը հաստատում է մեղադրական եզրակացությունը, ապա իրավասու դատարան միջնորդություն է հարուցում մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին:

Դատարանը բավարարում է դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու միջնորդությունը, եթե համոզվում է, որ՝

- 1) համագործակցության համաձայնագիրն ամբաստանյալի կողմից կնքվել է կամավոր, նա գիտակցում է համաձայնագրի կնքման հետևանքները և պնդում է, որ համաձայնագիրը չի կնքել բռնության, սպառնալիքի կամ հարկադրանքի այլ միջոցի ազդեցության հետևանքով.
- 2) համագործակցության համաձայնագիրն ամբաստանյալի կողմից կնքվել է պաշտպանի մասնակցությամբ և սույն գլխով նախատեսված մյուս պահանջների պահպանմամբ.
- 3) ամբաստանյալը համաձայն է իրեն առաջադրված մեղադրանքի հետ.
- 4) ներկայացվել են ամբաստանյալի կողմից համաձայնագրով ստանձնած պարտականությունները պատշաճ կատարելու մասին առերևույթ բավարար փաստական տվյալներ.
- 5) ամբաստանյալի համագործակցությունը չի հանգել մինչև համագործակցությունն իրեն մեղսագրվող արարքի կատարմանը բացառապես իր մասնակցության մասին տվյալներ հայտնելուն.
- 6) առկա չեն ակնհայտ տվյալներ այն մասին, որ ամբաստանյալին մեղսագրվող արարքը նա չի կատարել.
- 7) առկա չեն ակնհայտ տվյալներ այն մասին, որ ամբաստանյալին մեղսագրված արարքին տրված իրավական գնահատականը չի համապատասխանում մեղադրանքի փաստական հանգամանքներին:

Հակառակ պարագայում, դատարանը որոշում է կայացնում դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին: Ինչպես և համաձայնեցման վարույթի դեպքում, դատարանը համագործակցության վարույթում դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշումը կայացնելիս վերաբերելի հիմքերով (ինչպես օրինակ՝ վերոնշյալ 6-րդ կամ 7-րդ կետերով նախատեսված հիմքերը) պետք է հիմնվի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա: Ընդ որում, սահմանված ակնհայտության չափանիշի պայմաններում է, որ դատարանի կողմից համագործակցության վարույթում դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու որոշման կայացումը չի կարող դիտարկվել որպես դատարանի կողմնակալ վերաբերմունքի դրսևորում գործի նկատմամբ:

Փաթեթով որպես ամբաստանյալի իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության երաշխիք՝ նախատեսվել է նշված որոշման բողոքարկման հատուկ ընթացակարգ: Նշվածը վարույթի ընթացքը կանխորոշող այն բացառիկ որոշումներից է, որի դեպքում անհրաժեշտ է որդեգրել ոչ թե հետաձգված՝ վերջնական դատական ակտի հետ միաժամանակ այն բողոքարկելու մոտեցումը, այլ նախատեսել անմիջական՝ այդ որոշումը կայացնելուց անմիջապես հետո, հնարավորինս սեղմ ժամկետներում դրա իրավաչափության ստուգման հատուկ կառուցակարգ: Ի համեմատություն ընթացքի մեջ գտնվող դատական քննության պայմաններում կայացվող այլ որոշումների, այդ թվում՝ համաձայնեցման վարույթում համաձայնության մասին արձանագրությունը չընդունելու և ընդհանուր կարգով գործի քննությունը շարունակելու մասին որոշման, համագործակցության վարույթում դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշման անմիջական բողոքարկման հատուկ կառուցակարգի նախատեսումն ունի օբյեկտիվ հիմք և հետապնդում է իրավաչափ նպատակ: Մասնավորապես, գործի մինչդատական վարույթից սկսած նոր հանցագործության բացահայտման ուղղությամբ մեղադրյալի կողմից համընդգրկուն միջոցառումներ ձեռնարկելու, վարույթի կասեցման արդյունքում տևական ժամանակ քրեական հետապնդման ներքո գտնվելու պայմաններում համագործակցության վարույթում դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշման անմիջական վիճարկման հնարավորություն: Միաժամանակ, որպեսզի անորոշ ժամկետով ընթացքի մեջ չգտնվի այդ որոշման իրավաչափության դատական վերանայումը վերադաս դատական ատյաններում՝ վտանգի մեջ դնելով քրեական գործի պատշաճ քննությունը, Փաթեթի կարգավորումների և դրանց հիմքում դրված գաղափարախոսությամբ նախատեսվում է հնարավորինս սեղմ ժամկետներում կազմակերպել այդ որոշման իրավաչափության ստուգումը Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում:

Համագործակցության վարույթով ևս դատաքննության հատուկ կարգը կիրառելու արդյունքում դատարանը կարող է կայացնել միայն մեղադրական դատավճիռ՝ հաշվի առնելով նախատեսված առանձնահատկությունները: Ընդ որում, այն հարցերը, որոնք համաձայնեցվել են կողմերի միջև, մեղադրական դատավճռով դատարանը պետք է լուծի ըստ համագործակցության համաձայնագրի: Նշվածը ևս պայմանավորված է համագործակցության վարույթի հիմքում դրված գաղափարախոսությամբ, դատարանն իրավասու չէ միջամտելու այդ ընթացակարգին, բացառությամբ այն դեպքերի, երբ լուծման ենթակա հարցերը ենթակա չեն համաձայնեցման և չեն կարող դառնալ կողմերի համաձայնեցման առարկա (օրինակ՝ ակոհողամուտությունից բուժման կարիք ունեցող անձի նկատմամբ պատժի հետ մեկտեղ հոգեբույժի մոտ հարկադիր արտահիվանդանոցային հսկողության և հարկադիր բուժման նշանակումը կամ շրջանառությունն արգելված, անձանց ու հասարակության համար վտանգ ներկայացնող գույքի բռնագանձումը):

Նշված առանձնահատկությունների պայմաններում էլ նախատեսվել է, որ համագործակցության վարույթով կայացված դատավճիռը չի կարող բողոքարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին (գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին) և 4-րդ (դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին) կետերով նախատեսված հիմքերով:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նաև նշել, որ Փաթեթով նախատեսված է մեղադրյալի համագործակցության արդյունքում իր գործով կայացված դատավճիռը նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայելու կառուցակարգ, եթե այն կայացնելուց հետո ի հայտ գան այնպիսի հանգամանքներ, որոնք կհիմնավորեն, որ համագործակցության համաձայնագիր կնքած անձը քրեական հետապնդման մարմնին դիտավորյալ հայտնել է սուտ տեղեկություններ կամ թաքցրել է որևէ էական տեղեկություն կամ խոչընդոտել է համագործակցության արդյունքում բացահայտված հանցագործության հետազոտմանը: Նշված հանգամանքներից վերջինը կարող է դրսևորվել ցանկացած եղանակով համագործակցության արդյունքում բացահայտված հանցագործության հետազոտմանը խոչընդոտելով, այդ թվում՝ նախկինում տրված ցուցմունքների բովանդակությունը խեղաթյուրելով կամ էական նշանակություն ունեցող հանգամանքները փոփոխելով: Ուշադրության է արժանի նաև այն, որ սուտ տեղեկություններ հայտնելու կամ որևէ էական տեղեկություն թաքցնելու կամ համագործակցության արդյունքում բացահայտված հանցագործության հետազոտմանը խոչընդոտելու հանգամանքների առկայության հաստատման համար չի պահանջվում օրինական ուժի մեջ մտած դատավճիռ:

Միևնույն ժամանակ, համաձայնեցման և համագործակցության վարույթների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ նյութաիրավական հիմքերն ապահովելու նպատակով Փաթեթով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքում կատարել հետևյալ լրացումները.

- որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք նախատեսվել է՝ համագործակցության վարույթով մեղադրյալի կողմից իր կատարած այլ հանցագործությունը բացահայտելը: Նշված մեղմացնող հանգամանքը կիրառելի է քրեական ենթանշակայթին առնչվող կամ կոռուպցիոն

հանցագործությունների վարույթներով, երբ մեղադրյալը կբացահայտի իր կողմից կատարված այդպիսի հանցագործություն և մեղադրական դատավճռով պատիժ նշանակելիս, դրա կրման նպատակահարմարությունը որոշելիս դատարանը հաշվի կառնի այն,

- համագործակցության վարույթ կիրառելն ինքնին սահմանվել է որպես օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հատուկ հիմք, եթե դրա կիրառման հնարավորությունը կողմերը կնախատեսեն համագործակցության համաձայնագրում: Մասնավորապես, հաշվի առնելով մեղադրյալի կողմից համագործակցության վարույթի շրջանակներում նոր հանցագործության բացահայտման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների համալիրը՝ Փաթեթով համագործակցության վարույթի կիրառման դեպքում նախատեսվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու ինքնուրույն հիմք: Ինչ վերաբերում է համաձայնեցման վարույթի շրջանակներում օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու ինստիտուտի կիրառման հնարավորությանը, ապա այն հնարավոր է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր հիմքերի առկայության դեպքում, եթե կողմերն այդ հարցով զան համաձայնության,

- նախատեսվում է նաև, որ համաձայնեցման վարույթ կիրառելու դեպքում պատիժը չի կարող գերազանցել ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժատեսակի առավելագույն չափի կամ ժամկետի երկու երրորդը: Իսկ եթե առավել խիստ պատժատեսակի երկու երրորդը փոքր լինի ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժատեսակի նվազագույն չափից կամ ժամկետից, ապա այն չի կարող պակաս լինել նվազագույն չափից կամ ժամկետից,

- նախատեսվում է նաև, որ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններով համագործակցության վարույթ կիրառելու դեպքում կարող է նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել մեղմ պատժատեսակի նվազագույն չափը կամ ժամկետը կամ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ սանկցիայի նվազագույն չափից կամ ժամկետից պակաս չափը կամ ժամկետը կամ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառվել,

- վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման նոր հիմք է սահմանվել, այն է՝ եթե անձի հետ կնքվել է մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր: Նշված կարգավորման նախատեսումը նպատակ է հետապնդում ապահովելու համագործակցության բնականոն ընթացքը՝ բացառելով մինչ համագործակցելն անձին մեղսագրված արարքի վաղեմության ժամկետներն անցնելու ռիսկը: Այս դեպքում վաղեմության ընթացքը ենթակա է վերսկսման համագործակցությունը դադարեցվելու կամ համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդությունը դատարան ներկայացնելու պահից,

- համաձայնության և համագործակցության վարույթների կիրառման դեպքում նախատեսվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածով նախատեսված կանոնները կիրառելի են, եթե համաձայնության արձանագրությամբ կամ մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագրով բռնազանձման ենթակա գույքի կամ դրա չափի վերաբերյալ այլ բան նախատեսված չէ: Սակայն,

բոլոր դեպքերում բանակցությունների արդյունքում համաձայնեցված՝ բռնագրավման ենթակա գույքի չափը չի կարող պակաս լինել ընդհանուր կարգով բռնագրավման ենթակա գույքի արժեքի 75 տոկոսից: Այսինքն՝ օրինակ՝ կողմերը կարող են ձեռք բերել համաձայնություն բռնագանձման ենթակա գույքի՝ օրենքով նախատեսվածից առավել պակաս չափի շուրջ: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ նշված կարգավորմամբ նախատեսվում է հատուկ կանոն ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված ընդհանուր կարգավորման նկատմամբ: Ուստի, հատուկ կանոնը կիրառելի լինել չի կարող այդ ընդհանուր կանոնից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված բացառության նկատմամբ: Այսինքն՝ համաձայնության արձանագրությամբ կամ մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագրով բռնագանձում չի կարող տարածվել բարեխիղճ երրորդ անձի գույքի, տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույքի նկատմամբ: Միաժամանակ, հարկ է նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածի 5-րդ մասով առաջարկվող կարգավորմամբ նախատեսված է բացառություն, որի պարագայում շրջանառությունն արգելված կամ անձանց ու հասարակության համար վտանգ ներկայացնող գույքը և դրա չափը ենթակա չէ համաձայնեցման և պետք է պարտադիր բռնագանձվի հոգուտ պետության:

Ակնկալվող արդյունքը.

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ համաձայնեցման և համագործակցության վարույթների վերաբերյալ Փաթեթի ընդունման արդյունքում ակնկալվում է, որ նախատեսվող վարույթներով դատավարական ձևի պարզեցումը կնպաստի դատարանների և քրեական հետապնդում իրականացնող մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև հանցագործություններին առավել արագ և օպերատիվ արձագանքելուն, գործերն առավելագույն տնտեսման պայմաններում արդյունավետ քննելուն և լուծելուն: